

Տարաւ զանոնք բարձունքդ անհաս,
Ամէնուրեք Բեզ որոնեց,
Իր մատներով ոսկորացած,
Աչքով տրկար, հողով անհուն,
Ձքեղ դըրկեց
Վարդահեղեղ լոյսերուն մէջ,
Ձորձը պատուած, ոտքն արիւնոտ,
Լոյսին մէջ լոյս:

ՀՐԱԶ ՔԱԶԱՐԵՆՑ

24/ՓԲ/54

~ ~ ~

ՆՈՐԱԳՈՅՆ ԵՐԳԵՐ

ՀԱՄԱՌՅՐ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՈՒՆ

Կը համբուրեմ հողը օտար,
Ուր կը հանգչի մասունքը ձեր,
Ո՛վ տարաբախտ իմ եղբայրներ,
Որ կարօտով ինկաք ի սպա՛ռ:


Բեկոր մ'եղաւ Հայրենիքի՝
Ձեզմէ մէջ մին, Երկրիս վըրան,
Բընակարա՛ն եւ գերեզման՝
Երկիրն ամբողջ ըրի՛ք ձեզի:

Սըփռեցիք դուք զոյգ ափերով
Ձեր ծաղիկները Մայիսի,
Վերածեցիք մութը լոյսի՛,
Վէրքը՝ երգի՛ սիրազորով:

Դուք ցըրուեցաք երկրիս վըրան,
Ո՛հ, քաղցիք դուք ծագէ ծագ,
Բայց ոլորտին մէջ միացաք՝
Փողփողենէջ, յաւերժակա՛ն:

ՀՐԱԶ ՔԱԶԱՐԵՆՑ

24/ՓԲ/54



ԶԷՆՔԻ ՏԱԿ

Ք Ա Թ Ի Ի Շ Ա Ն

1942 Ձատիկ: Ալեքսիս Լազարեւիչ բա-
րեկամս զիս հրաւիրած է իր տունը: Լա-
զարեւիչը ինձմէ տասնեւհինգ տարի աւելի
մեծ է: Գեղեցիկ մարդ մըն է Լազարեւի-
չը. բարտիի պէս ուղիղ, ծանրաբարոյ եւ
սակաւախօս: Կատակաբան ալ է: Այս
պարագան շաղախն է մեր բարեկամու-
թեան եւ մտերմութեան:

Սեղանին վրայ ամէն ինչ Արեւելքը կը
խիչեցնէ. մեր Արեւելքը. հոնտեղի հողն ու
արեւը, հոնտեղի ծառերը, եւ այդ ծառե-
րուն տակ վազող ջուրերը: Հաւկիթները
ճերմակ են, կանաչ ու կարմիր: Սեղանին
վրայ, ապուխտն ու ձիթապտուղը դրա-
ւած են իրենց պատուոյ տեղը:

Լազարեւիչի կինը անոյշ կին մըն է.
դեռ երիտասարդ. սեւ մազերով եւ սեւ
յօնքերով: Լազարեւիչի աղջիկներն ալ աղ-
ուոր են: Ես անոնց իտալերէն կը սորվե-
ցնեմ, եւ անոնք ինձի կը սորվեցնեն տե-
ղական լեզուն եւ տեղական պարերը:

Կէսօրուան կերութումէն վերջ՝ Լազա-
րեւիչն ու ես այցելութեան պիտի եր-
թանք. տիկին Փաւլովնան մեզի կը սպա-
սէ: Տիկին Փաւլովնան արդիական դեղե-
ցիկ տուն մը ունի: Քառասուն տարեկան
է եւ այրի: Կ'ապրի իր երկու աղջիկներուն
հետ: Մէկզմէկ հասկնալու համար հինգ
լեզուով կը խօսինք:

Շարաթը զէթ անդամ մը հիւր եմ այս
բարի եւ ազնիւ տիկնոջ: Նատիան, կրտսեր
աղջիկը, կը սիրէ համազգեստս, Ալպեան
թնդանօթածիգ սպայի փետրաւոր գըլ-
խարկս: Սորվեր է իտալերէն քանի մը նա-
խադասութիւն, եւ զանոնք կը գործածէ
մեծ ճարտարութեամբ: Սորվեր է նաեւ
իտալական բանական աստիճանաւորման
դասաւորումը: «Սորտաթոյ», «Քափորա-

լէ», «Քափորալ Մաճճիորէ», «Սերճեն-
թէ», «Սերճենթէ Մաճճիորէ»...

Բայց, ո՛ւր է Քաթիւլան. ինչո՞ւ զայն
հիւրասրահ տեսնելու առիթը չեմ ունե-
նար երբեք:

Երբ, առօրեայ պարտականութիւններէս
ձերբազատուած, կ'երթամ Փաւլովնանե-
րուն այցելութեան՝ կ'անցնիմ բակ-պար-
տէզէն, ուր կը ծաղկի նշենին, որուն տակ
միշտ նստած կ'ըլլայ Քաթիւլան, անտար-
բեր, բացակայ կեանքէն եւ աշխարհէն,
դիտելով երկինքը, աղատ եւ անկախ, լե-
ցուն արեւով եւ հովով:

Քաթիւլան երբեք չի բարեւեր զիս: Զի
բարեւեր ոչ մէկ սպայ, չի բարեւեր նոյն
խակ Ալպեան ռազմիկներուն վաթսուեամ-
եայ հրամանատարը: Միշտ լուռ է, մը-
տածկոտ, բացակայ կեանքէն եւ աշխար-
հէն:

— Տիկին Փաւլովնա, ինչո՞ւ Քաթիւ-
լան միշտ է միշտ, սիրահարուած է ար-
դեօք:

Տիկին Փաւլովնա չի պատասխաներ:
Ի՞նչ ըսէ, խեղճ կնիկը. կը տեսնէ իր սի-
րասուն զաւակը որ կը նիհարնայ, որ կոր-
սընցուցեր է իր քսան տարիներուն դուար-
թութիւնը: Յիրաւի, ի՞նչ ըսէ, խեղճ կը-
նիկը...: Ամէն օր նոր ցաւ, նոր կուլ եւ
նոր մահեր: Թերեւս, սիրահարուած ալ է:
Ի՞նչ դիտնայ, խեղճ կնիկը...:

— Տիկին Փաւլովնա, ինչո՞ւ կու լաք,
ի՞նչ է պատահեր:

— Երեք օրէ ի վեր Քաթիւլայէն լուր
չունիմ. երեք օրէ ի վեր ձեզի կը սպասէի:

Կ'անցնին շարաթներ. Քաթիւլայէն
լուր չկայ:

Տիրութիւնը իջեր է Փաւլովնաներուն
տան վրայ: Տիկինը հիւանդ է, փոքր աղ-
ջիկը տխուր, ամէն ինչ մութ է հիմա ա-
նոնց շուրջ. նշենին տակ չկայ Քաթիւ-
լան, քսանամեայ Քաթիւլան, որ բացա-
կայ էր կեանքէն եւ աշխարհէն, որ երբեք

չէր բարեւեր զիս, որ երբեք չէր բարեւեր
իմ զինակից ընկերներս:

Գիշերուան ժամը չորսին, Օգնական
զինուորս զիս կ'արթնցնէ:

— Պարոն բժիշկ, հագուեցէ՛ք շուտով,
պիտի մեկնինք: Ապստամբները կը մօտե-
նան մեր դիրքերուն. պէտք է ընդառաջ
երթալ անոնց...

Գիշերուան մութին մէջ ջորիները կը
տքան, իրենց ամբակներով ծեծելով հողն
ու ժայռերը: Լեռնային թնդանօթածիգ-
ները իրենց հուժկու բազուկներուն վրայ
ստած մեր թնդանօթներուն կտորները՝
զանոնք ճարտարութեամբ կը տեղաւորեն
անասուններուն մէջքին եւ կողերուն:
Սպաները կը շրջին ջրային եւ անհան-
դարտ: Անոնք, շատ լաւ դիտեն թէ ի՞նչ
ըսել է արթննալ գիշեր ատեն, ընդառաջ
երթալ Մոնթենեկրոյի ապստամբներուն:

— Պարոն բժիշկ, չմոռնաք հականե-
խիչներ առնել... վէրքերս լաւ խնամե-
ցէ՛ք... կեանքի եւ մահուան սահմանադի-
ժը յաճախ երակ մըն է միայն... պարոն
բժիշկ, չմոռնաք հականեխիչներ առ-
նել...:

Սերճոն է. սովորականին պէս կը կա-
տակէ:

Կը հագուիմ շուտով: Դեղատուփերս
պատրաստելէ առաջ՝ կը քննեմ ատրճա-
նակս եւ ուսնկախ թեթեւ զնդացիրս:

Գիշերուան մէջ կը քալեն ջորիները: Իմ
խումբիս առջեւէն, կոնակէն, աջէն եւ
ձախէն կը յառաջանան Ալպեան զինուոր-
ները: Լեռներուն վրայ անտառները լուռ
են: Լուռ է երկինքը. մեր աջակողմեան
լեռնաշղթային վերեւ լուսինը նշխարի
պէս է:

Առաւօտեան ժամը վեցին կը լսուի ա-
ռաջին զնդակը, ապա երկրորդը, երրոր-
դը...

— Վա՛ր առէ՛ք թնդանօթները, դիրք
ընեցէ՛ք... ո՛չ ոք կորսնցնէ իր հանդար-
տութիւնը... վա՛ր առէ՛ք թնդանօթնե-
րը...:

— Ենթաստվածյան կապրիտէլէ, դուք ձեր թնդանթով կրա՛կ բացէք անմիջապէս...

— Ենթաստվածյան էտմոնտոյ, աչքէ անցուցէք ծանր ու թեթեւ զնդացիրներուն խմբակները...

— Ենթաստվածյան Միքէլէ, հսկեցէք ջորիներուն վրայ...

— Տեղակալ Վինչենցոյ, անլտանդ տեղ մը դա՛ք, ժայռի մը ետեւ...

Սանտրոն է: Քսանեւթը տարեկան փոխ հրամանատարս, որ կուռի պահերուն դիտէ մնալ իր տեղը, անլերջ ծիւղով, երբեմն աւրելով բերանը, սակայն, դիտէ մնալ իր տեղը...

Վայրկենապէս կուռ կը տաքնայ: Լեռներուն բարձունքներն եւ խորխորատներուն պարապուծիւնը ծանրօրէն կ'արձագանգեն թնդանթներուն որոտն ու դրնդակներուն վայելներ: Ապստամբները չեն տեսնուիր. անոնք երբեք չեն տեսնուիր, սակայն կը զգացուին, եւ ինչպէս կը զգացուին...

Առաջին վիրաւորները կը հասնին: Կը սկսիմ դործի: Հականետել եւ կապել... ներարկում... ապա դարձեալ ներարկում... հականետել եւ փաթթել:

Կը տեսնեմ, որ Ալպեան զինուորներուն աջ թեւը կը նահանջէ, ապա ձախ թեւը:

— Տեղակալ Վինչենցոյ, դուք ձեր տեղէն մի՛ շարժիք...

— Ենթաստվածյան կապրիտէլէ, դուք ձեր տեղէն մի՛ շարժիք...

— Ենթաստվածյան Ալֆոնսոյ, հեռախօսեցէք անմիջապէս Ալպեան Հրամանատարութեան, հաղորդեցէք որ... որ...

— Ենթաստվածյան էտմոնտոյ, զնդացիրները ձախակողմեան խճուղիին վրայ ուղղեցէք... կրա՛կ... կրա՛կ...

Քիչ վերջ կը սկսի մեր յառաջխաղացումը: Ապստամբները կը նահանջեն, միշտ կրակելով: Այս անգամ եւս պիտի աղատին, որովհետեւ իբրեւ թիկունք եւ օղակաւն ունին իրենց լեռները, ծործորներն ու հողը: Ի՞նչպէս կուռի աղբի մը հողին դէմ...:

Ժամը առաւօտեան տասն է: Վեց հրոսակներ դերի են ինկած: Ամէնն ալ յաղթանդամ են ու պիտոտ: Մեր առջեւն կը քալեն յաղթողներու նման: Գլուխները վեր:

Ռազմադաշտին վրայ կը հանգչին մեռելներն ու ծանր վիրաւորները:

— Տեղակալ Վինչենցոյ, հոս եկէք անմիջապէս. կը ճանչնա՞ք այս ապստամբը:

Շոճի մը բունին տակ կուրծքէն դարնուած Մոնթենեկրոցի մը կայ, որ երկար մաղեր ունի, ուսերուն վրայ իջնող, որ կապոյտ աչքեր ունի եւ նուրբ շրթունքներ, որ քսան տարեկանէ աւելի ըլլալու է...

— Տեղակալ Վինչենցոյ, կը ճանչնա՞ք այս ապստամբը...


Քաթիւշան է... նշենին տակի Քաթիւշան... ան՝ որ երբեք չէր բարեւեր դիւ, որ երբեք չէր բարեւեր իմ զինակից ընկերներս:

Գլուխը հակած է դէպի ձախ, աջ ձեռքին մօտ հրացանը:

Սանտրոն յուզուած է. յուզուած եմ նաեւ ես:

Երկուքս բարեւի կը կանգնինք Քաթիւշայի դիակին առջեւ, այն Քաթիւշային՝ որ երբեք չէր բարեւեր դիւ, որ երբեք չէր բարեւեր իմ զինակից ընկերներս...:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ



ԱՒԱՂԵԼԻ ՎԻՃԱԿ ՄԸ

Կը մտնեմ վանքի ընթերցասրահը, ուր կարգով ու խնամքով դասաւորուած են օրուան թերթերը. հայ սփիւռքի արձագանգն է որ կը հնչէ Ս. Ղազարի մէջ: Հնդկաստանէն Քալիֆոռնիա, Պաղեստինէն Արժանթին, ամէն գաղութ կը շարունակէ ապրիլ հոս՝ իր լուրերով, տեղական հարցերով ու պայքարներով: Բայց իսկոյն այս բոլորին մէջէն աչքի կը զարնէ աւաղելի վիճակ մը, ուղղադրական խառնիճաղանձ մը, բարեկոնական խառնակութեան պէս, որ մտահոգիչ է անշուշտ:

Միթաբաւական երեւոյթ մըն է, այո՛, կարգ մը թերթերու նախանձախնդրութիւնը մեր «Մեծասքանչ»ին հանդէպ. չորհաւորելի է միշտ «Յուսարբ»ի, «Հայրենիք»ի, «Պաշար»ի, «Նայիրի»ի եւ ուրիշ սակաւթիւ թերթերու հոտիկանական արարքները՝ ի նպաստ լեզուական մաքրութեան: Ատենէ մը ի վեր «Նայիրի»ն սիւնակ մըն ալ բացած է, «Արշակաւան» խորագրով, նման հարցերու իբր դատարան. բայց, ինչպէս ինքն ալ կը խոստովանի, կարգ մը թերթեր դժբախտաբար ամբողջովին Արշակաւաններ են (Գ. տարի, թիւ 9, էջ 5):

Միւս կողմէ, չեն պակսիր նաեւ անոնք, որ պաշտպանողական դրօշակին տակ՝ հինցած ու աւելորդ բանալիներով սիւնակներ կը մրոտեն դեռ վերջերս ալ. օրինակ, թէ գրաբար բառը ու՛ր պէտք է դրել՝ կամ ու՛ր: Մինչ անդին հսկայ ուղտեր կ'ասպատակեն մեր գրական անդամները:

Անաչառ ըլլալու համար՝ ըսելու ենք որ մեր լաւագոյն կարծուած թերթերն ալ երբեմն սայթաքումներ կ'ունենան. այսպէս,

«Յառաջ»ի 1954, Դեկտ. 2-ի թիւին չորրորդ էջին վրայ դարձանքով կարդացի սա աղբը. «Յառաջի վարչութիւնը գրավանառութեամբ չգրադիր. ուղիղ ձեւն է չի գրադիր:

Նմանապէս «Նայիրի»ի փոխան - խմբագիրը, իր Գ. տարի, թ. 13ի ութերորդ էջին վրայ գետեղած մէկ աղբին մէջ՝ կը գրէ մեծատառ. Առանց եւ կանանց ամէն տեսակ նորոյթներ: Այդտեղ գրելու էր արանց, ու՛ր, որ կը նշանակէ այդ մարդոց. իսկ առանց ու՛ր՝ նախադրութիւն մըն է, որ կը նշանակէ sans: Ապահովաբար երկուքն ալ անուշադրութեան հետեւանք:

Աւաղելի այս վիճակին դարձան մը ճարելու նպատակով՝ սկիզբ կու տանք մեր ներկայ սիւնակներուն. հակիրճ տողերով պիտի ջանանք ներկայացնել հիւանդը եւ հարկ եղած դեղը. յաճախ լոկ ախտաճանաչումն իսկ բաւարար պիտի ըլլայ:

ՀԵՐԱԿԼԵՍ

Պատմելիքս դիցարանութիւն չէ. ատիկա քաղուածօրէն կատարած է Մ. Յ. Շնորհաբեան իր «Պատանեկան Արձագանգ» ամսաթերթին մէջ (ԺԸ. տարի, թ. 9, էջ 267): Բայց ինչ որ ուշադրաւ է, յօդուածին վերնագիրն է, Հերֆիլէս, ու ստորեւ դրուած ծանօթութիւնը. այս անունին դասական ձեւը Հերակլէս է, սակայն նկատի ունենալով որ Հերֆիլէս ձեւը աւելի ընդհանրացած է, այս վերջին ձեւը գործածեցինք: Տարօրինակ մտածելակերպ...:

Այսպէսով ո՞ւր պիտի հասնի մեր օտարամոլութիւնը: Իսկ այն անունները, որոնք տարբեր կերպով կը հնչուին խոսալացիէն, Փրանսացիէն ու մանաւանդ անգլիացիէն, ի՞նչ ձեւով պիտի առնենք. որո՞ւ նախընտրութիւն պիտի տանք:

Երբ հինէն ի վեր կայ Հերակլէս ձեւը, պարտական ենք ատիկա գործածել. ստորեւ դրուելիք ծանօթութիւնն ալ, եթէ